



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHÉGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՔՈՒԵՅԹԻ ՀԱՅԿ. ՎԱՐԺԱՐԱՆԻ 50-ԱՄԵԱԿԻ ՅԱՆՁԱԽՈՒՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Զուեյթի Հայկական Վարժարանը այս տարի կը բոլորէ իր կեանքի առաջին կէս դարը: Ոսկեայ յոբելեանին առիթով, Զուեյթի մէջ թէ այլուր, Նախատեսուած են տօնախմբութիւններ ու հանդիսութիւններ:

Վարժարանի նախկին սաներէն ու բարեկամներէն մեր ափերը բնակութիւն հաստատած հայորդիներ կազմած են 50-ամեակի յանձնախումբ մը, որպէսզի իբրեւ երախտագիտութեան արտայայտութիւն՝ իրենց լուման նուիրաբերէն վարժարանին ու վեր առնեն անոր դերակատարութիւնը: Յանձնախումբի անդամներէն՝ Տիկնայր Սարալ Մանուկեան, Այտա Գամարեան եւ Տիար Յրաչ Գալուստեան Յինգշաբթի, 19 Օգոստոսի յետմիջօրէին, այցելութիւն մը տուին Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Անոնք ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին այն ձեռնարկներուն ու հանդիսութիւններուն մասին, որոնք կը նախատեսուին յառաջիկայ ամիսներուն:

Առաջնորդ Արքազանը ողջունեց յանձնախումբին մարմնաւորումը եւ բարձր գնահատեց նախկին սաներուն պատրաստակամութիւնը՝ նիւթապէս ու բարոյապէս նեցուկ կանգնելու Զուեյթի եւ Ծոցի երկիրներու մեր Թեմի հովանին տակ գործող հայկական կրթօճախին: Ան գոհունակութիւն յայտնեց, որ անցեալ տասնամեակներուն արձանագրուած տագնապալի հանգրուաններուն հետքերը թօթափուած են ու վարժարանը վերահաստատած է իր առաքելութիւնը: Առաջնորդ Արքազանը նաեւ իր օրինութիւնը տուաւ յանձնախումբի աշխատանքներուն եւ փոխանցեց անոնց նեցուկ կանգնելու Ազգ. Առաջնորդարանի պատրաստակամութիւնը:

KUWAIT ARMENIAN SCHOOL 50TH ANNIVERSARY COMMITTEE MEMBERS VISIT THE PRELACY

In the coming months, the 50th anniversary of the Armenian School of Kuwait will be ceremoniously celebrated both in Kuwait and in communities

around the world. Committees have been formed in various communities by alumni and friends of the school to assist in the planning of the celebrations.

On Thursday, August 19th, 2010, members of the local 50th anniversary committee visited the Prelacy to meet with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Members Mrs. Maral Manoukian, Mrs. Aida Kamarian, and Mr. Hratch Kaloudsian reported to the Prelate on the events and activities that are planned for the near future.

The Prelate commended the members for their efforts in providing moral and financial support to the school, and expressed the support of the Prelacy in their mission.